



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000063

Ձեռնարկողը՝

«Սահակյանշին» ՓԲԸ
Ք. Երևան, Արարաբյան 117/1

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Հայկ
Հովսեփյան փողոց, հ.31 և հ.31/2 հասցեներում
բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

թիվ ԲՓ 000063

< 06 > 08 2019թ.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Հայկ Հովսեփյան փողոց, հ.31 և հ.31/2 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Սահակյանշին» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան

«Սահակյանշին» ՓԲ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Հայկ Հովսեփյան փողոց, հ.31 և հ.31/2 հասցեներում կառուցել բազմաբնակարան բնակելի շենքեր: Բնակելի համալիրի տարածքը գտնվում է Հայկ Հովսեփյան և Մանանդյան փողոցների միջակայքում, զբաղեցնում է 1.47 հա տարածք: Տարածքը կառուցապատված է հասարակական և արտադրական տարբեր տեսակի շինություններով և սեփականության իրավունքով պատկանում է «Սահակյանշին» ՓԲԸ ընկերությանը /արտադրական բազա, վարչական շենք և այլ օբյեկտներ/: Հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /հողամասերի հատակագծեր՝ N 14-2019 տրվ. 29.01.2019թ. և N 1393-2018 տրվ. 12.11.2018թ./: Ընկերությունը նախատեսում է կառուցապատման աշխատանքներն իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով՝ հողամասի նպատակային նշանակությունը փոխելուց հետո: Նշված գործընթացից հետո, բնակելի համալիրի արտաքին ինժեներական ցանցերի համար կմշակվեն վերջնական նախագծեր /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/ ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրվող տեխնիկական պայմանների համաձայն: Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի առկա ճանապարհներով, որոնք անցնում են հողամասի երկու կողմերով: Գործունեության ենթակա տարածքի հարևանությամբ հասարակական և վարչական օգտագործման տարածքներ են, բնակելի շենքեր և այլ շինություններ: Ներկայացվող տարածքն ամբողջությամբ կառուցապատված է, բացակայում է հողային ծածկույթը: Հողամասի հարավ-արևելյան մասում առկա երկհարկանի շինությունը /որի չափերն են 16x10/, ենթակա է քանդման, իսկ որոշ կառույցներ վերակառուցվելու են այլ նպատակով օգտագործման /պահեստային շինությունը վերակառուցվելու է մարզադահլիճի, կամ լողավազանի/:

Բնակելի թաղամասը ձևավորվելու է 20 հարկայնությամբ 3 բնակելի շենքերով՝ համալրված ներքին բակով: Երկու շենքերը կառուցվելու են Հայկ Հովսեփյան փողոցի երկարությամբ գտնվող հյուրանոցի աջ և ձախ կողմերում, իսկ երրորդ շենքը՝ հողամասի



հարավ արևմտյան սահմանին: Բնակելի համալիրի ներքին բակի մակերեսը զբաղեցնելու է մոտավորապես 5000 մ², որն ամբողջությամբ ծառայելու է ստորգետնյա ավտոկայանատեղի՝ բոլոր բնակիչների ավտոմեքենաների համար: Ներքին բակում տեղակայված է լինելու մանկական ֆուտբոլի դաշտ, մանկական խաղահրապարակ, ինչպես նաև այգիներ՝ գրուցարաններով: Դեպի ներքին բակ անձնական մեքենաների մուտքը և կայանումն արգելվելու է, քանի որ բակը նախատեսվում է երեխաների և ծերերի անվտանգ հանգիստը կազմակերպելու համար: Մուտք դեպի ներքին բակ ապահովվելու է միայն հրշեջ մեքենաների համար՝ արտակարգ իրավիճակների դեպքում:

Կառույցը կունենա հետևյալ տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Հատկացվող հողամաս՝	14673.22 մ ²
Կառուցապատման մակերես՝	4874.5 մ ²
Ասֆալտապատում՝	2443.0 մ ²
Սալապատում՝	1713.4 մ ²
Կանաչապատում՝	4989.0 մ ²
Խաղահրապարակներ՝	653.3 մ ²

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման աշխատանքների համար Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված ընկերության կաղմից կկազմվի կանաչապատման նախագիծ, որը կներառվի վերջնական կառուցապատման նախագծում:

Կառուցապատման համար տրամադրվող հողամասի հարևանությամբ ներկա պահին իրականացվում են շինարարական աշխատանքներ, բնակելի համալիրի մի մասնաշենքը կիսակառույց վիճակում է: Շինարարական աշխատանքների ժամանակ հողային աշխատանքներից առաջացող հանույթի զանգվածը ընդհանուր կառուցապատվող տարածքի համար կկազմի 46875 մ³: Հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային հողային գրունտների մի մասը՝ մոտ /10500 մ³ ծավալը/ նախատեսված է տեղափոխել սահմանված աղբավայրեր, իսկ գրունտի մնացած մասը /մոտ 36375 մ³ ծավալը/, որը նախատեսված է կրկնակի օգտագործել, տեղափոխվելու է <<Սահակյանշին>> ՓԲ ընկերությանը պատկանող արտադրական տեղամաս:

Շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող շինաղբը /որի մեջ մտնում են նաև քանդման արդյունքում առաջացող տարբեր տեսակի թափոններ՝ 120 մ³.ծավալով/ և մնացորդային հողային գրունտների՝ 10500 մ³ ծավալը, Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված տեղադրվելու են Աջափնյակ վարչական շրջանի՝ Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի տարածքում գործող շինարարական թափոնների աղբավայր:

Բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են՝ նախապատրաստական փուլի աշխատանքներ, քանդման աշխատանքներ, հողային աշխատանքներ, տարածքի բարեկարգման աշխատանքներ և այլն:

Շինհրապարակում ջրամատակարարման և ջրահեռացման միացումներն իրականացվելու են առաջնահերթ: Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Նախատեսվող գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի դիտարկվում, քանի որ ամբողջությամբ օգտագործվելու են կառուցապատված տարածքները:



Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ: Ապրանքային բետոնը նախատեսված է շին.հրապարակ բերել բետոնա-շաղախային հանգույցից՝ պատրաստի վիճակում:

Նոր կառուցվող շենքերի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կառաջանան առկա շինության քանդման, նոր շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից: Հողային աշխատանքների ժամանակ մշակվող գրունտի՝ 46875մ³ ծավալի համար հաշվարկվել են գումարային փոշու արտանետումները, որը կկազմի 11.4 տ/շին.ժամանակահատված: Շինարարության ընթացքում օդային ավազանը աղտոտումից պահպանելու միջոցառումները ներառում են՝ շինհրապարակի ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների թափքի ծածկում, շինհրապարակի ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, շինհրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում, շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգաբերում:

Հարակից տարածքներում աղմուկի մակարդակի նվազեցման միջոցառումները ներառում են՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին, աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, կամ խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերում:

Սոցիալական ազդեցություններից խուսափելուն կամ մեղմելուն ուղղված միջոցառումները ներառում են՝ մոտակա բնակչության իրազեկումը նախատեսվող շինարարական աշխատանքներին և հնարավոր ազդեցություններին /պատճառվող անհանգստություն, երթևեկության ծանրաբեռնվածություն, փոշու քանակների ավելացում և այլն/, շինարարական աշխատանքների և բեռնատար մեքենաների համար ժամանակացույցի մշակումը, համապատասխան ցուցանակների տեղադրումը, ժամանակավոր անցուղիների նախատեսումը և այլն:

Շրջակա տարածքներն աղտոտումից և պատահական թափվածքներից զերծ պահելու նպատակով շինհրապարակում շինարարական նյութերի և քայուղերի ժամանակավոր պահեստները նախատեսված են տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որն ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով:

Շինարարության ընթացքում հիմնական թափոնատեսակը կլինի շինարարական աղբը, որը կառաջանա ինչպես առկա շենքի քանդման/վերակառուցման, այնպես էլ նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքներից: Առաջացող թափոնների տեղադրումը Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կիրականցվի սահմանված աղբավայրերում:

Նախատեսվող գործունեության ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսվող անցանկալի, բացասական ազդեցությունները կանխարգելող և մեղմացնող միջոցառումները ներառված են ԲԿՊ-ում և իրականացվելու են կապալառու կազմակերպության կողմից:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կառուցապատողի կողմից կիրականացվի մոնիթորինգ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի և իրականացվող բնապահպանական միջոցառումների համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:



Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման համար նախատեսվում է նաև նոր բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, և օգտագործումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար նախատեսված է օգտագործել թոյա, կաղնի, գնդաձև ակացիա, հացենի, թղկի, լացող ուռենի և այլ ծառատեսակներ, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ:

Ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցի միջոցով: Ամբողջ հողամասը կունենա ոռոգման ավտոմատ համակարգ: Երևանյան լանդշաֆտում ծառերի կաչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է կառուցապատողը:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության: Փորձաքննության ընթացքում հաշվի է առնվել նաև Երևանի քաղաքապետարանի և քաղաքաշինության կոմիտեի կարծիքները:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով՝ հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելուց հետո:
- Նախագծում անհրաժեշտ է ներառել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագիծը:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահակյանշին» ՓԲԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Հայկ Հովսեփյան փողոց, հ.31 և հ.31/2 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ.մասնագետ



Հ. Մկրտչյան